

ՀԱՅՐԵՐՈՒ ՕՐ

(Յունիսի 9. Կիրակի Օրը)

Պատրաստե՛ք՝ Կարօ Պետրոսեան Ֆերատեան Վարժարանի համար

Հայրերու Օր մը հաստատելու գաղափարը վերջին հարիւրամեակին ժողովուրդներու ընկերային կեանքին մէջ դրական երեւոյթներէն դուրս
մըն է. նորութիւն մը:

Քսաներորդ դարու ընթացքին կարելի է թուել սկիզբ առած տօնելի
բազմաթիւ այլ Օրեր եւս, որոնք անկասկած արդիւնք են զարգացող
ընկերութիւններու մէջ այնպիսի նախաձեռնութեանց, որոնց միտք բանին՝
նպատակը, համաժողովրդային գնահատումն է զանազան մարզերու մէջ
հաւաքականութեան համար մարդկային ծառայութիւններուն. անոնց մէջ՝
Ուսուցչի Օրը, Քարտուղարի Օրը, Հիւանդապահներու Օրը, Մեծ Հայրերու-
Մեծ Մայրերու Օրը (Grand Parents Day), եւ այլն:

Ակներեւ է, որ հետզհետէ առաւել եւս կը շեշտուի կարեւորութիւնը
լայն շրջանակներով գնահատելու նման տարրերու ջանադրութիւնը. եւ այս
բոլորը՝ երեւոյթներ եւ փաստեր՝ որոնք բնական կերպով կը տրամադրեն
մեզ մտածելու, որ ընկերութիւնները իսկապէս կը դառնան անելի՛ ուշադիր
դէպի մարդկայինն ու անոր ծառայութիւնը: Եւ այս՝ հակառակ անոր, որ շատ
երկիրներու մէջ տակաւին առկայ կը մնան ժխտական եւ յոռի երեւոյթները,
ինչպէս ընկերային, ներընտանեկան բռնութիւնները, ահաբեկչութիւնը,
պատերազմները, ու նոյնիսկ կրկնուող ցեղասպանական ոճիրները...:

Հայրերու Օրուան գաղափարը այժմ ընկալուած է լայն խաւերու
կողմէ. այդ առնչութեամբ սակայն, մասնաւորեւք հետեւեալը՝ փարատելու
համար կասկածամտութիւնը այն մասին, որ արդեօ՞ք այս մէկն ալ
ստեղծուած է առեւտրական շահարկումներու հեռանկարով. որովհետեւ,
Մայրերու Օրուան հիմնադիրը՝ Աննա Ժարվիս (Anna Jarvis) նկատի առած
իր ճիգերով իրականացած Մայրերու Օրուան տնտեսական-առեւտրական

գետնի վրայ բազմատեսակ շահագործութիւնները, քանիցս դժգոհութիւն յայտնած է, որ ան՝ նուիրական Օրը՝ շատերուն համար փոխած է իր նպատակը, իմաստը...

Այսուհանդերձ սակայն, ինչպէս Մայրերու Օրուան ազնուական գաղափարը շուքի տակ ձգած է նման երեւոյթները, որոնք կապուած են նիւթին եւ շուկայական հաշիւներուն, նոյնպէս եւ Յայրերու Օրը եւ անոր տուն տուող զգացումներն ու մղումները, պէտք է հաստատել, որ խորապէս դրդուած են մարդկայնական բարոյական արժէքներէ եւ աննկմով հարստացած՝ ան վեր կը մնայ ամեն տեսակ շահարկումներէ եւ երեւոյթներէ:

Յայրերու Օրուան Գաղափարը Եւ Նախաձեռնութիւններ

Կարճ անդրադարձ՝ թէ ինչպէ՞ս Յայրերու Օրը սկիզբ առած է եւ թէ ինչպիսի՞ մտածումներով կեանքի վերածուած է ան:

Դրուագ Առաջին

- 1907-ի Դեկտեմբերին, Միացեալ Նահանգներու Վըրճինիա նահանգին մէջ (West Virginia), Մոնանկա (Monongah) քաղաքին մերձակայքը կը պատահի հանքային պայթիւնային ծանր աղէտ: Կը մահանան 361 անձեր, մեծ մասը՝ իտալացի գաղթականներ, աշխատաւորներ եւ անշուշտ՝ հայրեր:

Չգայուն աղջիկ մը՝ Կրեյս Կոլտըն Բլէյթըն, աղէտի տխուր ազդեցութեան տակ ապրելէ ետք յուզումնալից ամիսներ, կը դիմէ շրջանի եկեղեցւոյ քարոզիչին, խնդրելով որ Կիրակի մը աղօթքն ու կարգը եկեղեցւոյ

մէջ, որ այժմ կը կոչուի Central Unites Methodist Church, յատկացնէ աղետեալներուն եւ հայրերու յիշատակին:

Խնդրանքը կը գործադրուի 1908-ի Յունիսի 5-ին: Պետք է անելքն էլ, որ բարի աղջկան՝ Կրէյսին մտքին մէջ, Հայրերուն մասնաւորուած Օրուան գաղափարը այդ շրջանին առաւել եւս կը շեշտուի երբ նոյն ատեն, իրենց մերձակայքը, 17 մղոն հեռաւորութեան վրայ Grafton-ի մէջ (West Virginia) տեղի կ'ունենար Մայրերու Օրուան առթիով հանդիսութիւն: Կրէյս կը մտածէ. ինչո՞ւ ընտանիքին մէջ միայն Մայրերը ըլլան մեծարանքի երախտաւորները...

Դրուագ Երկրորդ

Ազնուական տիկին մը՝ Սոնորա Սմարթ Տոտ (Sonora Smart Dodd), որ խանդաղատանքով կը հետեւէր Մայրերու Օրուան հանդիսութեանց, բարի նախանձ մը սրտին մէջ կը մտածէ. - ինչո՞ւ Մայրերու Օրուան հիմնադիր Աննա Ժարվիսի օրինակով, իր կարգին ի՞նք եւս, չհետապնդէ իրականացնելու համար Հայրերո՞ւն նուիրուած Օր մը...:

Գաղափարը՝ իրեն կը թելադրուի իր մտքին մէջ ունենալով բազմանդամ հօրենական - ընտանեկան կեանքը:

Արդարեւ, երբ իր մայրը մահացած էր, ինք եւ իր 5 եղբայրները եւ քոյրերը մնացեր էին բացառապէս իրենց հօրը խնամքին ենթակայ: Հայրը՝ ամերիկայի քաղաքացիական պատերազմի վեթերան՝ Ուիլյէմ Ճեքսըն Սմարթ (William Jackson Smart), իր ամբողջ կարելիութեամբ, լուռ ու մունչ կը լծուի իր զաւակներու խնամատարութեան, եւ տարիներ շարունակ անխոնջ նուիրումով, զոհողութիւններով կը յաջողի բոլոր զաւակները հասցնել պատուաւոր դիրքերով ապագայի մը:

Տիկին Սոնորան տրուած պայմաններուն մէջ յաւետ երախտապարտութեան եւ անհուն սիրով լի հանդէպ իր հօրը, յաճախ ինքն իրեն հարց կու տայ.- ինչո՞ւ հայրերն ալ չունենան մեծարանքի յատուկ Օր այնպէս՝ ինչպէս մայրերը: Եւ՝ ուխտ մը կատարելու պէս կը լծուի աշխատանքի, պաշտօնական եւ համազգային գետնի վրայ կայացնելու համար Հայրերուն Օրը:

Այդ ոգիով՝ տիկինը կը յաջողցնէ հայրերուն նուիրուած առաջին հանդիսութիւն մը, որ տեղի կ'ունենայ 1910, Յունիսի 19-ին:

Այնուհետեւ, ձեռնարկին տուն տուող գաղափարն ու բարոյական արժէքները այնքան ժողովրդականութիւն կը գտնեն, որ շուտով նման ձեռնարկներ կը կրկնուին նահանգէ նահանգ ամբողջ Ամերիկայի մէջ:

1926-ին, Նիւ-Եորքի մէջ կը կազմուի Զայրերու Օրուան համար Ազգային Յանձնախումբ:

1956-ին, Միացեալ Նահանգներու Քոնկրէսը կ'իւրացնէ Զայրերու Օր մը ունենալու առաջադրութիւնը եւ այդ՝ պաշտօնապէս կը գրանցէ:

1972-ին, նախագահ Ռիչըրտ Նիքսըն ի վերջոյ կ'օրինականացնէ Զայրերու Օրը եւ զայն կը դասէ ազգային տօներու կարգին, նշելի՛ ամէն Յունիսի Երրորդ Կիրակիին:

Յիշեալ թուականէն սկսեալ կանոնաւորութեամբ, այնպէս ինչպէս Մայրերու Օրը, նաեւ Զայրերու Օրը Միացեալ Նահանգներու մէջ, ժողովրդային կամ ընտանեկան մթնոլորտի մէջ կ'ընկալուի այն գիտակցութեամբ, որ հայրը արժանի է մասնաւոր ուշադրութեան եւ գնահատանքի, որովհերեւ կը ներկայացնէ բարոյական կարեւոր մէկ հիմնատարը ընկերութեան ամենէն նուիրական այն կորիզին, որ ընտանիքն է:

Ստորեւ, հանրային կարծիք արտայայտող **ամերիկեան ժողովրդային աւանդութիւն** մը, որուն խորքին մէջ խտացած պէտք է տեսնել ազնիւ ու առողջ նկարագրի յատկանիշներ, որոնց գումարով Աստուած արարած է Զայրը:

Աւանդութիւն

Անծանօթ հեղինակը կը յուշէ.

- Այն ժամանակ երբ Աստուած զբաղած էր բարւոյն ստեղծագործութիւններով, աւանդաբար կը պատմուի հետեւեալը ՅԱՅՐութեան մասին. թէ՛ Արարիչը՝

- Դիտեց ծառի մը վեհութիւնը,
- Հիացաւ լերան ամրութեան վրայ,
- Տեսաւ ամրան եղանակի արեւուն շերմութիւնը,
- Խաղաղ ծովուն հանդարտութիւնը,
- Հողին եւ Բնութեան բարիքներուն առատութիւնը,
- Պիշերուան հանգստութիւնը,
- Դարերուն իմաստութիւնը,
- Թռչող արծիւին զօրութիւնը,
- Գարնանային առաւօտներտու ուրախութիւնը,
- Մանանեխի հատիկին հաւատքը,
- Յաւերժին համբերութիւնը,
- Ընտանիքի պէտքերուն խոր գիտակցութիւնը...:

Բաւարարուած՝ Աստուած նկատեց, որ ուրիշ աւելցնելիք բան չկար: Ուստի, յիշեալ արժեքներն ու կեանքի յատկանիշները իրարու խառնեց եւ համոզուեցաւ, որ ամբողջացած էր եւ իր արարումներու գլուխ-գործոցը. անունը դրաւ՝ ՅԱՅՐ:

* * *

Անկասկած հաճելի զգացում է մտածել Հայրերու Օրուան մասին, որ կը նշանակէ լուսարձակի տակ առնել Հայրը, անոր ջանադրութիւնը եւ այն արժանիքներն ու յատկանիշները, որոնք կը մասնաւորէն զայն որպէս գլուխ ընտանիքի եւ յանձնառու անոր բարօր կեցութեան: Հայր՝ իբր հոգածու եւ պատասխանատու անձ՝ որուն մղիչ ուժը անանձնական սերն է, անխօս գոհողութիւնները, կառուցողական գործը եւ հուսկ՝ հպարտ ու ազնիւ

արժանաւորներ հասցնելը ի բաւարարութիւն եւ ի պատիւ թէ՛ ընտանեկան յարկին եւ թէ՛ յօգուտ պատկան իր մեծ ընկերութեան, որ ժողովուրդն է ու իր ազգը:

Բացայայտ է, որ բոլոր ժողովուրդներուն ալ մօտ, բարձրօրէն գնահատուած է հայրութեան գաղափարը, որ նկատուած է թէ՛ արժանիք, թէ՛ պատիւ:

Արեւելքի երկիրներուն մէջ, առաւել եւս մեծարելու համար հայրական հանգամանքը, շրջապատը զայն փոխանակ կոչելու իր ընթացիկ անձնանունով, կը վերակոչէ հայրութեան փաստին՝ այսինքն Նորածինին հա՛յրը ըլլալու պատուանունով. «Ապու Զրայր», «Ապու Կայծակ»... , որ կը նշանակէ՝ Զրայրին կամ Կայծակին հայրը, եւայլն:

Ժողովրդային այս գեղեցիկ սովորութեամբ քանի քանիներ յաճախ իրենց բուն անուններով մոռցուած՝ մնայուն կերպով վերակոչուած են իրենց ժառանգներուն անուններով. «Ապու Վարդան», «Ապու Սարգիս»...:

Չայրերու Օրը՝ Միջազգային կեանքի մէջ

Չայրերը մեծարելու համար յատուկ Օրուան մը գաղափարը ներկայիս ընդունուած եւ իւրացուած է Եւրոպայի, Միջին Արեւելքի, Ափրիկէի, Ասիայի բազմաթիւ երկիրներու եւ ժողովուրդներու կողմէ: Ոմանց մօտ՝ պաշտօնական բնոյթ ունի ան, իսկ ուրիշներու մօտ՝ ժողովրդային նախաձեռնութիւններու եւ տարբեր տարբեր թուականներով:

Ի դէպ յայտնեք, որ կարգ մը երկիրներու մէջ Կաթողիկէ եկեղեցին Չայրերու Օրուան գաղափարը իւրացուցած՝ միաձուլած է Սրբոյն Յովսէփին, կամ՝ Չայր Յովսէփին նուիրուած կրօնական տօնին հետ, որ կը զուգահիշի եւ կը տօնուի Մարտի 19-ին:

Յայրերու Օրը եւ Յայեր

Բնական է որ Յայրերու Օրը մուտք գործեր նաեւ հայ կեանքին մէջ:

Յայաստանի մէջ, գրանցուած կամ պաշտօնապէս ճշդուած Յայրերու Օր՝ չկայ: Չէ եղած նաեւ արտերկրի հայկական ընկերային-մշակութային կեանքին մէջ:

Յայր իմացումը հայուն համար, կարծէք ունեցած է միայն խորքային բնոյթ: Ան ակնածանքի, պատկառանքի, արդարադատութեան լուռ հնչեղութիւն է շրջապատին մէջ: Յայը, իր անթիւ, բազմատեսակ տօներու կարգին եթէ յատուկ օր, տօն ստեղծած չէ հօր համար, պէտք չէ հետեւցնել, որ անտեսումի արտայայտութիւն է կամ հետեւանք է: Պատճառը՝ հայ կեանքի մէջ անոր նկատմամբ իւրայատուկ մօտեցումներն են եւ շեշտուած կերպով ընտանիքին մէջ անոր կեդրոնաձիգ ներկայութիւնը:

ՅԱՅՐ . Բառը

Յայրը ընտանիքին կարելոր մէկ անդամը ըլլալու իմաստէն անկախ, հայ լեզուամտածողութեան մէջ իր մէջ կը խտացնէ բազմազան այլ գաղափարներ եւ արժէքներ եւս.

Յայրը՝ խտացումն է՝ նախնիներուն, նահապետներուն, հողին, ծննդավայրին, հայրենիքի գաղափարին, եւայլն: Կ'ըսենք՝ մեր նախահայրերը, մեր հայրենիքը...:

Ժողովուրդը, յայտնի իր կրօնասիրութեամբ՝ իր Աստծոյն, եկեղեցիին եւ ժողովուրդի ծառայութեան կոչուած պաշտօնեաները անխտիր կը կոչէ Յայր պատուանունով: Պարզ քահանայէն մինչեւ բարձրագոյն կարգը գբաղեցնող կրօնականները, հայը՝ Յայր կը կոչէ. քահանայ Յայրը, Սրբազան Յայրը, Պատրիարք Յայրը, Վեհափառ Յայրը, եւայլն:

Վերջին դարերու Յայոց Պատմութեան մէջ, հայ ժողովուրդը իր ամենէն մեծ տիտղոսը որ շնորհած է ազգանուէր եւ ժողովրդական մեծ կրօնականին, այդ եղած է «Յայրիկ» անուանումը: Յասկնալի է անշուշտ, որ

խօսքը Ամենայն Յայոց Յայրապետ՝ Մկրտիչ Խրիմեան Կաթողիկոսի մասին է:

Ոչ մէկ շքանշան կրնար այդքան երկար ապրիլ եւ պահել արժէքը, որքան՝ անփոխարինելի «Յայրիկ»ը:

Յայ ժողովուրդը Յայր վերադիրով իր երախտագիտութիւնը հաստատած է ու պատուած իր ազգութեան եւ մշակոյթին ամենաբարձր ծառայութիւնը մատուցած Ոսկեդարու գրիչներէն՝ պատմագիր Սովսէս Խորենացին, զայն կոչելով **Մեր Պատմահայրը**: Արդար եւ իրաւ. որովհետեւ ան է, որ բժախնդրօրէն ուսումնասիրած, գրած եւ մեզի աւանդած է հայ ժողովուրդի ազգային, ամբողջական եւ ճշգրիտ պատմութիւնը:

Այսուհանդերձ, վերոգրեալ մասնաւոր պարագաներէն անկախ, ուշագրաւ է որ ժողովրդային կեանքին մէջ եւս, **Յայրը** միշտ նուիրական կամ սրբութեան մը համազօր իմացումով արտասանուած է: Աշխարհի բոլոր ծագերուն, ամենուրեք երբ մարդիք իրենց վճռորոշ եւ անսուտ խօսքը ըսելու համար կը վկայակոչեն իրենց կրօնի Սուրբ Գիրքը, հայ մարդը անոր համազօր կը վկայակոչէ Յօրը արեւը, Յօրը գերեզմանը...: Արժէքներ՝ որոնք բացառապէս կ'արտայայտեն իր նկատմամբ հայ մարդուն կողմէ տածուած բարձր ու անչափ նուիրական հասկացողութիւնը:

Պէտք է հաստատել անպայման, որ ՅԱՅՐը յատուկ ուշադրութեան նիւթ է նաեւ Աստուածային պատգամներու մէջ.

- «Պատուէ քու Յայրդ եւ Մայրդ, որպէսզի բարիք գտնես եւ որպէսզի բարութեան այս երկրին վրայ ապրիս երկար կեանք զոր քու տէր Աստուածդ պիտի շնորհէ քեզի», (Ելից 20, 12)

ՀԱՅՐԸ ԵՆ Հանճարեղ Հայ Բանաստեղծին Մտորումները

Մեծությւնը կամ ակնածանքը հոր նկատմամբ զոր ամեն մարդ որոշ չափով երախտագիտութեամբ կը զգայ, հրաշալիորէն դրսեւորուած կը գտնենք մեր ժամանակներու անկրկնելի բանաստեղծ, ցեղասպանութեան զոհ՝ Դանիէլ վարուժանի մէկ քերթուածին մէջ: Առանց մեկնաբանութեան, կու տանք քանի մը հատուածներ.

Հայր Օրհնէ՛

Հայր, ես կ'երթամ այն ճամբայէն՝ որ ճերմակ
մազերուդ գիս կը տանի,
Վաստակաբէկ ոսկորներուդ, ծեր սըրտիդ
եւ սերերուդ կենդանի...

Բաւական է.- աշխատեցար, կըրեցիր.
Ամեն նետի, հարուածի
Վահան եղար ինծի համար. հոգիդ է՝
որ հոգւոյս մէջ կը յածի:

Հայր իմ, Օրհնէ՛, դողդոջ ձեռքերդ գլխուս դիր.
թող մատներէդ կաթի վար
Աղօթքդ՝ եկած հոգւոյդ պայծառ խորանէն:
Վերջին ժամս է. օրէնէ՛ Հայր:

Հունկ. հոր արժանաւորութիւնը մեր գիտակցութեան մէջ, **Հայրերու Օրուան** գախափարը՝ անկասկած կը դառնայ խիստ մարդկային ապրում: Իսկ տօնախմբութեան միջոցառումը՝ որոշապէս նպաստ՝ ընտանիքի բոլոր անդամներուն միջեւ առաւել յարգանքի եւ ընտանեկան սիրոյ ամրակայման: